տակի պատկերը յանկարծակի կը պայծառանայ և կը սկսի խօսիլ, և կ'ըսէ Ս. Կուսի պատկերին. «Ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ». և ան կ'ըսէ. «Զիարդ լինիցի ինձ այդ». և միւսը կը յարէ. «Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քոյ». և կ'ըսէ Ս. Մարիամու պատկերը. «Եղիցի ինձ ըստ բանի քում». և ապա ինչ պատկերներ որ կային եկեղեցիին մէջ, սկսան աղաղակել. «Ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ, և օրհնեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո»։ Վարդապետը զիս կանչեց և ըսաւ, կը լսե՞ս ինչ կ'ըսէ այս եղբայրը, եւ նոյնը պատմեց ինձ։ Սկսայ քննել նոյն օրը տումարական արուեստով. և իրօք ճշմարտապէս Ապրիլ ամսոյ եօթն էր, և հասկցանք թէ հաւատքը իրօք ճշմարիտ է. և երբ ես լսեցի զայն Գառնեցի Յովհաննէսէն, այն ատեն հաւանեցայ որ Աւետեաց տօնը կատարուի Ապրիլ Է.ին (Գ. Թղ. էջ 527-528, Բազ. 1867, էջ 206)։

3. Ս. Յակոբեանց եկեղեցիին ժողովրդական հին աւանդութիւնները. — Երբ Եգիպտոսի Սուլթան Սալաէտտին Երուսաղէմը լատիններէն գրաւեց, շատ եկեղեցիներ մզկիթի վերածեց, և հայոց Ս. Յակոբ եկեղեցին ալ ուզեց իւրացնել՝ որ բարձր և գեղեցիկ չէնք մըն էր. բայց նոյն ժամանակի Երուսաղէմի հայ ժողովուրդը և Միաբանութիւնը մեծ ու պզտիկ՝ ոտքը ինկած յաղթական Սալաէտտինի՝ խնդրեցին որ իրենց շնորհուի Ս. Յակոբայ եկեղեցին՝ որ իրենց հայրենի ժառանգութիւնը եղած էր։ Յաղթականը լսելով ժողովուրդին թախանձանքն ու ողբուկոծը ի գութ շարժեցաւ և ըսաւ որ կուտամ ձեզի Ս. Յակոբայ եկե-